

## ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ԵԿԵՂԵՑԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

**Պ. Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ**

*Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ*

Պատմական Հայաստանում քաղաքական և հոգևոր-կրոնական իշխանությունների զարգացման պատմության ուսումնասիրությունը ի հայտ է բերում որոշակի օրինաչափություններ, որոնք առաջացել և զարգացում են ապրել դեռևս նախաքրիստոնեական Հայաստանում, իսկ այնուհետև, ավելի համակարգված և ամբողջական տեսք են ստացել քրիստոնեության ընդունումից հետո: Այդ համատեքստում բավական ուշագրավ են պետություն-կրոն-եկեղեցի հարաբերությունները Հայաստանում քրիստոնեության ընդունման նախօրեին և 4-5-րդ դդ.:

Անդրադառնալով նախաքրիստոնեական Հայաստանի պետական կառուցվածքին և կրոնական ինստիտուտների գործունեությանը՝ կարող ենք փաստել, որ հեթանոսական Հայաստանում դեռևս անհիշելի ժամանակներից ձևավորված էր մի համակարգ, ըստ որի գերագույն իշխանության մարմնացումը, այսինքն քաղաքական առաջնորդը միապետն էր, որի կողքին սակայն կար մի ազդեցիկ դաս, որը խոշորագույն դերակատարություն ուներ երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում: Դա քրմերի դասն էր: Հին Հայաստանում քրմական դասի առկայության և հասարակական կյանքում ունեցած դերակատարության մասին արժեքավոր տեղեկություններ են հաղորդում Ագաթանգեղոսը, Մովսես Խորենացին, Հովհան Մամիկոնյանը, ինչպես նաև հնագիտական պեղածո նմուշներն ու Արմավիրում և Գառնիում պահպանված հունարեն արձանագրությունները: Բազմաթիվ հիշատակությունները և ուսումնասիրությունները փաստում են, որ Մեծ Հայքի թագավորությանը սահմանակից երկրներում քաղաքական և հոգևոր իշխանությունները ունեին փոխհարաբերությունների հստակ և համակարգված կառուցվածք, գործառույթների և իրավունքների կոնկրետ սահմանազատում և գործունեութ-

յան որոշակի ոլորտ<sup>1</sup>: Գլխավոր քուրմը կամ քրմապետը թագավորից հետո երկրորդ անձն էր և հիմնականում երկուսն էլ ներկայացնում էին միևնույն տոհմը: Անկասկած նույնպիսի փոխհարաբերություններ էին ձևավորվել նաև Հայաստանում, որտեղ միապետը երբեմն նաև կրոնական առաջնորդն էր, կամ էլ իշխանության այդ երկու թևերի կրողը գահակալող տոհմն էր՝ դեռևս երվանդունիներից սկսած: Մասնավորապես, ըստ Խորենացու, Երվանդ 4-րդի եղբայր Երվազը հայոց քրմապետն էր<sup>2</sup>, իսկ Արտաշես արքան իր որդուն՝ Մաժանին քրմապետ է կարգում Արամազդի գլխավոր պաշտամունքատեղիում՝ Անիում<sup>3</sup>, այնուհետև, ավելի ուշ, Վաղարշակ արքան Վահունիներին, որոնք իրենց նախնի էին համարում Վահագն աստծուն, հանձնարարում է քրմության պաշտոնը<sup>4</sup>: Փաստացի հիշատակություններ ունենք, որ Հայաստանի քրմապետը արքայական տոհմից էր, կամ էլ արքան միաժամանակ քուրմ էր: Օրինակ հռոմեացի մատենագիր Տակիտոսը վկայում է, որ Տրդատ Ա թագավորը միաժամանակ նաև քուրմ էր<sup>5</sup>: Արմավիրում գտնված հունարեն արձանագրություններից մեկում նշվում է այն մասին, որ քրմապետը թագավորի հետ համարյա նույն աստիճանում էր<sup>6</sup>: Իհարկե հարկ է նշել, որ քրմական դասի հզորությունը առաջին հերթին պայմանավորված էր տաճարական տնտեսությունների նյութական հարստությամբ և ունեցվածքով, ընդարձակ տիրույթներով և մարդկային ռեսուրսներով (տաճարական ստրուկ-ծառաներ) և այլն:

Փաստացի ամփոփելով այս և նմանատիպ այլ հիշատակությունները Հայաստանի և հարակից երկրների մասին, կարող ենք ենթադրել, որ հնագույն ժամանակներից հայոց արքան հանդես էր գալիս որպես գերագույն քուրմ, կամ էլ այդ դերը փոխանցվում էր արքայական ընտանիքի՝ արքային մոտ կանգնած որևէ անձի: Հատուկ ուշադրության է արժանի նաև այն, որ քաղաքական և հոգևոր իշխանություններին պետք է ավելացնել նաև դատական իշխանությունը, որը նույնպես պատկանում էր արքայական տոհմին և հիմնականում քուրմն էր մեծ դատավորը:

<sup>1</sup> Հեթանոսական Հայաստանում և հարակից երկրներում քրմական դասի և պետություն-կրոն հարաբերությունների մասին մանրամասն տե՛ս Ս. Մ. Կրկյաշարյան, Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ.թ.ա. VI-մ.թ. IV դդ.), Երևան, 2005, էջ 129-151:

<sup>2</sup> Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1990, էջ 106:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 119:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 54, 76, 80:

<sup>5</sup> Ս. Մ. Կրկյաշարյան, Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ.թ.ա. VI-մ.թ. IV դդ.), էջ 130-131:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 133:

Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո նախաքրիստոնեական Հայաստանի կառավարման այդ համակարգը, որտեղ քուրմը արքայից հետո ամենահեղինակավոր անձն էր, և ավելին, նույն տոհմի ներկայացուցիչ, շարունակեց գործել առնվազն 4-րդ դարում, երբ Տրդատ Մեծի և Գրիգոր Լուսավորչի ժամանակներից սկսած՝ քաղաքական և կրոնական իշխանության կրողները հիմնականում Արշակունի թագավորական տոհմի ներկայացուցիչներն էին: Հայ առաքելական եկեղեցու կազմավորման փուլում նորաստեղծ եկեղեցին ժառանգեց հեթանոսական կրոնական իշխանության հիմնական գործառնություններն ու հատկանիշները: Փաստացի եկեղեցին տեր դարձավ նաև հեթանոսական տաճարների ողջ հարստությանը և այն արտոնություններին, որ ուներ քրմական դասը:

Փաստերի համադրումը և քննական վերլուծությունը հնարավորություն է տալիս փաստել, որ քրիստոնեության ընդունումից հետո էլ հայոց թագավորական տոհմը շարունակեց պահել և վերահսկել հոգևոր իշխանությունը: Իշխանության տարբեր թևերի կառավարումը շարունակեց մնալ Արշակունիների մենաշնորհը: Եկեղեցին դարձավ Հայաստանի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի ամենակարևոր գործոններից մեկը:

Ինչպիսի՞ փաստեր են խոսում մեր այս եզրահանգման օգտին: Այսպես, Հայոց եկեղեցու հիմնադիր Գրիգոր Լուսավորիչը, որին մեր պատմագրությունը հիմնականում ներկայացնում է պարթև, ակնհայտ է, որ ներկայացնում է Արշակունի արքայական դինաստիան և Տրդատ Մեծի ազգականն է, եթե չասենք ուղղակի հայ Արշակունիներից մեկը: Մեր պատմիչները նշում են, որ Գրիգորը պարթև Անակի որդին էր, պարթև Արշակունիների վերջին շառավիղներից մեկը<sup>7</sup>: Եթե խնդրին մոտենանք համակողմանի վերլուծության դիրքերից, ապա փաստ է, որ Հայոց եկեղեցու հիմնադրումից հետո հոգևոր իշխանությունը անցավ Գրիգոր Լուսավորչի Արշակունի տոհմին և որոշ ընդհատումներով պահպանվեց մինչև Սահակ Պարթև՝ Լուսավորչի վերջին ժառանգը: Փաստացի թե՛ կաթողիկոսը (թեկուզև պարթև), և թե՛ արքան նույն տոհմի ներկայացուցիչներն էին: Լուսավորչի ժառանգական սեփականությունը դարձան հեթանոսական տաճարներից բռնազավթած կալվածքները՝ հատկապես պաշտամունքային մի շարք կարևոր կենտրոններ (Վտիշատ, Թիլ, Թորդան և այլն): Հայոց եկեղեցու առաջնորդը շարունակեց պահպանել քրմայետին բնորոշ իշխանական լծակները, մասնավորապես մեծ դատավորի պաշտոնը:

<sup>7</sup> Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, էջ 131, 136, Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, էջ 34:

Եվ ենթադրելի է, որ քրիստոնեության պետական կրոն հռչակման գործում Տրդատ Մեծի և Գրիգոր Լուսավորչի արդյունավետ համագործակցությունը մաս այս գործոնների առկայության հետևանք էր, որովհետև նոր կրոնական համակարգը ևս արքայական տանը թույլ էր տալիս պահպանել և հզորացնել քաղաքական, հոգևոր և դատական իշխանությունների արդեն գոյություն ունեցող ձևը: Դա է թերևս պատճառը, որ նոր իրողությունների պայմաններում քաղաքական և հոգևոր իշխանությունների համագործակցությունը բավականին արդյունավետ էր և նպաստում էր Հայոց թագավորության հզորացմանը և առաջընթացին: Այդ միտումները շարունակվեցին մաս Արիստակես և Վրթանես կաթողիկոսների գահակալության շրջանում, չնայած, որ դեռևս տեղ-տեղ պահպանվող հեթանոսական միջավայրը դեռ մարտնչում էր քրիստոնեության դեմ և փորձում վերականգնել խարխլված դիրքերը, որի վկայությունն են մեր մատենագիրների հիշատակությունները Արիստակես կաթողիկոսի սպանության և Վրթանեսի դեմ ծրագրված մահափորձի մասին<sup>8</sup>: Այսինքն, մինչև 341թ. (Վրթանեսի գահակալության վերջը) քաղաքական և հոգևոր իշխանությունները բավականին արդյունավետ համագործակցում էին, պետություն-եկեղեցի հարաբերությունները նորմալ հունի մեջ էին և սակրալիզացիան մեծ թափ էր հավաքում: Եկեղեցու պետական կարգավիճակը և կաթողիկոսի արքայական տոհմի ներկայացուցիչ լինելը հնարավորություն էին ընձեռել եկեղեցուն դառնալու քաղաքական, տնտեսական և մշակութային լուրջ գործոն, հասարակական կարևոր դերակատարություն ունեցող ինստիտուտ, որի իշխանության հզորացումը և պետություն-եկեղեցի հարաբերություններում քաղաքական իշխանությանը հակադրվելը կարող էր հանգեցնել պետության համար անցանկալի հետևանքների:

Արտաքին և ներքին քաղաքական իրադրության փոփոխությունը և տարածաշրջանային խնդիրները պետություն-եկեղեցի հարաբերությունների նոր որակ արձանագրեցին Տիրան արքայի գահակալության տարիներին, երբ Հուսիկ-Տիրան հակամարտությունը ավարտվեց կաթողիկոսի սպանությամբ, չնայած այն հանգամանքին, որ արքան ու կաթողիկոսը արյունակցական և խնամիական կապի մեջ էին (ըստ Բուզանդի)<sup>9</sup>: Այս դեպքում ևս զգացնել էր տալիս

<sup>8</sup> Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, էջ 157, 166, Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1987, էջ 16-17:

<sup>9</sup> Ըստ Փավստոս Բուզանդի՝ Հուսիկ կաթողիկոսը ամուսնացած էր Տիրան արքայի դստեր հետ, սակայն որոշակի անհամապատասխանություն կա Հուսիկ կաթողիկոսի որդիների Պապի և Աթանագիների մասին հիշատակության մեջ, որովհետև պատմիչը գրում է, որ նրանք ամուսնացած էին արքայի թույրերի հետ, ինչն անհասկանալի է, բայց, համեմայնդեպս, մի բան ակնհայտ է, որ

վերնախավի հեթանոսական վարքութարքը և եկեղեցու պայքարը դրա դեմ, սակայն կարևոր հանգամանք է նաև այն, որ օրեցօր հզորացող եկեղեցին թերևս կայանում էր նաև որպես ինքնուրույն, քաղաքական իշխանությունից տարբեր կառույց, և արքայական տնից կախումը արդեն դառնում էր անտանելի կամ ոչ ցանկալի: Սա եկեղեցու ինքնուրույնության ձգտումների հետևանքն էր: Կարող ենք ենթադրել, որ հեթանոսական համակարգից ժառանգված կրոն-պետություն հարաբերությունների մոդելը սկսել էր փոխվել, և նոր իրողություններ էին ի հայտ գալիս: Եկեղեցին դարձել էր անկախ և ինքնավար կառույց, իսկ ավանդական կապերը արքայական տան հետ և տոհմական պատկանելությունը արդեն որոշիչ գործոն չէին: Թերևս դա էր պատճառը, որ Տիրանը փորձեց Լուսավորչի տոհմի ձեռքից վերցնել հոգևոր իշխանությունը և կաթողիկոս դարձավ Փառեն Աշտիշատեցին<sup>10</sup>:

Սկզբնական և ավանդական համակարգը փորձ արվեց վերականգնել Արշակ Բ-ի օրոք, որի արդյունքում կաթողիկոս դարձավ Ներսես Մեծը, որն իր գործունեության ընթացքում (իհարկե սկզբում արքայի անմիջական հովանավորությամբ) հզորության գագաթնակետին հասցրեց եկեղեցական իշխանությունը և վերջնական տեսքի բերեց եկեղեցական կառույցը, քրիստոնեությունը դարձրեց պրակտիկ կրոն՝ Աշտիշատի ժողովի որոշումների իրագործումով պայքարելով հեթանոսական ավանդությունների և սովորությունների դեմ: Քաղաքական իշխանության թուլացման և կենտրոնախույս նախարարների գործունեության, ինչպես նաև արտաքին անբարենապաստ քաղաքական իրավիճակի արդյունքում, ինչպես գիտենք, Հայաստանը պատերազմեց Պարսկաստանի դեմ, որի հետևանքը եղավ Արշակ Բ-ի կործանումը և Հայաստանի ինքնիշխանության ժամանակավոր կորուստը:

Հզորացած եկեղեցու դեմ նոր պայքար սկսեց Պապը, որի վարած քաղաքականությունը և պետություն-եկեղեցի հարաբերությունների վատթարացումը ի վերջո դարձավ Արշակունի թագավորության կործանման գործոններից մեկը: Պապը իր պապի՝ Տիրանի օրինակով փորձեց սահմանափակել եկեղեցու իշխանությունը՝ կաթողիկոսական գահը վերցնելով Լուսավորչի տոհմից, սակայն նրա կարճատև գահակալությունը և դավադիր սպանությունը թույլ չտվեցին տեսնել այդ քաղաքականության պտուղները և Հայաստանի բաժա-

---

Լուսավորչի տոհմի և արքայական տան միջև առկա է խնամիական կապ, տե՛ս **Փավստոս Բուզանդ**, Հայոց պատմություն, էջ 21, 71:

<sup>10</sup> Տե՛ս **Սովսես Խորենացի**, Հայոց պատմություն, էջ 176, **Փավստոս Բուզանդ**, Հայոց պատմություն, էջ 71-72:

նումից հետո փաստացի կաթողիկոսական գահը նորից վերադարձվեց Լուսավորչի տոհմի վերջին ժառանգին՝ Սահակ Պարթևին:

4-րդ դարի վերջին և 5-րդ դարի սկզբին, արդեն պարսից տիրապետության տակ, եկեղեցին պետության հետ հարաբերությունների նոր դարաշրջան թևակոխեց, որովհետև այս հարթությունում եկեղեցին պետք է ենթարկվեր պարսից իշխանությանը և Հայաստանի կիսանկախ վիճակին զուգահեռ՝ հարաբերությունները կարգավորեր օտար տիրապետության հետ: Այս փուլում եկեղեցին արդեն սկսում է դառնալ որոշիչ քաղաքական գործոն, մեծանում է կաթողիկոսի դերակատարությունը, որն ուղեկցվում է Հայաստանում քաղաքական իշխանության թուլացմամբ և եկեղեցու դերակատարության բարձրացմամբ: Վռամշապուհ արքայի օրոք պետություն-եկեղեցի հարաբերությունները բավականին լավ էին և փոխհամագործակցության բարձր մակարդակ ապահովեցին, որի արդյունքում արձանագրվեցին հայ հոգևոր-մշակութային կյանքի ամենաբարձր նվաճումները: Փաստացի կարող ենք պնդել, որ այս դեպքում պետություն-եկեղեցի հարաբերություններում արձանագրվեցին փոխհարաբերությունների լավագույն որակները:

Սակայն հարաբերությունների այս լավագույն մակարդակը երկար չտևեց և հայոց պետականության անկմամբ եկեղեցին նոր տիպի համաբերություններ սկսեց ձևավորել արդեն օտար տիրապետությունների իշխանությունների հետ: Այս ընթացքում եկեղեցին ձեռք բերեց նոր գործառնություններ և դարձավ քաղաքականության մեջ ներգրավված նոր տիպի կառույց:

Ամփոփելով ուղղակի կարող ենք փաստել, որ պատմական Հայաստանում պետություն-եկեղեցի (կրոն) փոխհարաբերությունները բավականին զարգացած և համակարգված բնույթ ունեին, հստակ էր իշխանական թեների և գործառնությունների բաժանումը, եկեղեցին իբրև պետական կառույց ուներ արտոնություններ, հարկահավաք գործառնությ, նրա ձեռքում էր նաև դատաիրավական համակարգի կառավարումը: Այս պայմաններում հայոց պետականությունը հիմնականում շահեկան դիրքում էր հայտվում, երբ արքա-կաթողիկոս հարաբերությունները գտնվում էին փոխադարձ բարիդրացիական և համագործակցության մակարդակում, և հակառակը, եթե պետական իշխանական այս թևերից որևէ մեկը սկսում էր հզորանալ և խախտվում էր վերոհիշյալ համագործակցությունը, ապա տուժում էին պետական բոլոր ինստիտուտները, փաստացի ողջ պետությունը:

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS 13-6D375 գիտական թեմայի շրջանակներում:

***Բանալի բառեր** - նախաքրիստոնեական, քրմապետ, քուրմ, տոհմ, Հայոց եկեղեցի, կաթողիկոս*

## **SEVERAL CHARACTERISTIC FEATURES OF CHURCH-STATE RELATIONSHIPS IN HISTORICAL ARMENIA**

**P. A. BARSEGHYAN**

*Candidate of Philosophical Sciences, Assistant Professor*

There was functioning a clear system of church-state relationships in historical Armenia until the adoption of Christianity, where political and spiritual authorities belonged to the royal family. After the adoption of Christianity the system continued to operate and the Arshakuni royal family members political leaders were also became the first catholicoses.

## **НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ ГОСУДАРСТВЕННО-ЦЕРКОВНЫХ ОТНОШЕНИЙ В ИСТОРИЧЕСКОЙ АРМЕНИИ**

**П. А. БАРСЕГЯН**

*Кандидат философских наук, доцент*

В исторической Армении до принятия христианства действовала четкая система государственно-религиозных отношений, когда политическая и религиозная власть принадлежала королевской семье. После принятия христианства эта система продолжала действовать, и представители королевской семьи Аршакидов были не только политическими лидерами, но и первыми католикосами.